ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 մայիսի 2018 թվականի N 572 - Ա

«ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ԳՈՒՅՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ և «Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը

ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ՕՊԵԿ հիմնադրամի միջև 2015 թվականի սեպտեմբերի 3-ին ստորագրված N 1673P փոխառության համաձայնագրով իրականացված «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» ծրագրի շրջանակներում ստեղծված գույքը՝ 7,993,324,084 դրամ արժողությամբ, նվիրաբերել Հայաստանի Հանրապետության Տավուշի, Արագածոտնի, Լոռու, Շիրակի և Սյունիքի մարզերի համայնքներին՝ համաձայն հավելվածի, բացառապես նպատակային նշանակությամբ օգտագործելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության Տավուշի, Արագածոտնի, Լոռու, Շիրակի և Սյունիքի մարզպետներին և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատա-

կազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի տնօրենին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում ապահովել համապատասխան համայնքների հետ սույն որոշման հավելվածում նշված գույքի նվիրաբերության պայմանագրերի կնքումը՝ դրանցում սահմանելով, որ պայմանագրերի նոտարական վավերացման, գույքային իրավունքների պետական գրանցման և հանձնման-ընդունման գործընթացներն իրականացվելու են Հայաստանի Հանրապետության Տավուշի, Արագածոտնի, Լոռու, Շիրակի և Սյունիքի մարզերի համայնքների միջոցների հաշվին:

3. Առաջարկել սույն որոշման հավելվածում նշված համայնքների ղեկավարներին «Վեոլիա Ջուր» ընկերության սպասարկման տարածքում ներգրավվելու, համայնքային գույքերի արդյունավետ շահագործման, հետագա ներդրումների ապահովման նպատակով քննարկել համայնքների ջրամատակարարման գույքը Հայաստանի Հանրապետությանը, հանձին Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի, նվիրատվության տալու հարցը:

4. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքի ղեկավարին և «Սյունիք» ջրօգտագործողների ընկերությանը կնքել համայնքի ներտնտեսային ոռոգման ցանցերի անհատույց շահագործման պայմանագրեր:

5. Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահին՝

1) «Վեոլիա Ջուր» ընկերության հետ համաձայնեցնել համայնքներից գույքը նվիրատվությամբ ստանալուց հետո այն ընկերության վարձակալական պայմանագրում ներառելու հարցը.

2) համայնքներից նվիրատվությամբ ստացած գույքը գրանցել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի անունով և վարձակալության հանձնել «Վեոլիա Ջուր» ընկերությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2018 թ. մայիսի 23
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2018 թվականի
մայիսի 17-ի N 572 - Ա որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՆՎԻՐԱԲԵՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ

NN ը/կ	ՀՀ մարզի և օբյեկտի անվանումը	Օբյեկտի հզորությունը (գծ. մ)	Կառույցի արժեքը (դրամ)
1	2	3	4
	IRFSP/CW/NCB-2016/034		
1.	ՀՀ Լոռու մարզի Դսեղի համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	34447	480,671,911
	Լոտ 1 IRFSP/CW/ICB-2016/010-1		
2.	ՀՀ Արագածոտնի մարզի Աղձքի համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	23155	562,338,749
3.	ՀՀ Արագածոտնի մարզի Արագածի համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	58881	1,152,580,514
4.	ՀՀ Արագածոտնի մարզի Վարդենուտի համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	19354	423,914,599
5.	ՀՀ Արագածոտնի մարզի Բազմաղբյուրի համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	13723	369,578,956
	Ընդամենը	115113	2,508,412,818
	Լոտ 3 IRFSP/CW/ICB-2016/010-3		
6.	ՀՀ Լոռու մարզի Սվերդլովի համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	24319	501,129,536
7.	ՀՀ Տավուշի մարզի Արծվաբերդի համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	15484	253,275,546
8.	ՀՀ Տավուշի մարզի Կոթիի համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	20288	466,180,352
9.	ՀՀ Տավուշի մարզի Այգեձորի համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	16745	365,873,304
10.	ՀՀ Տավուշի մարզի Չինչինի համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	12925	204,258,517
11.	ՀՀ Տավուշի մարզի Նորաշենի համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	11611	237,560,249
	Ընդամենը	101372	2,028,277,504
	Լոտ 4 IRFSP/CW/ICB-2016/010-4		
12.	ՀՀ Շիրակի մարզի Ձիթհանքովի համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	14954	312,697,125

1	2	3	4
13.	ՀՀ Շիրակի մարզի Սառնաղբյուրի համայնքի ջրամա-տակարարման համակարգի վերակառուցում	34211	859,006,473
14.	ՀՀ Շիրակի մարզի Գուսանագյուղի համայնքի ջրամա-տակարարման համակարգի վերակառուցում	15544	469,511,485
15.	ՀՀ Շիրակի մարզի Ջաջուռի համայնքի ջրամատա-կարարման համակարգի վերակառուցում	9236	225,362,498
16.	ՀՀ Շիրակի մարզի Ջրառատի համայնքի ջրամատա-կարարման համակարգի վերակառուցում	4976	195,957,072
	Ընդամենը	78921	2,062,534,653
	Լոտ 6 IRFSP/CW/ICB-2016/010-6		
17.	ՀՀ Սյունիքի մարզի Ագարակի համայնքի ներտնտեսա-յին ոռոգման ցանցի վերակառուցում	10060	202,873,091
18.	ՀՀ Սյունիքի մարզի Ալվանքի համայնքի ներտնտեսային ոռոգման ցանցի վերակառուցում	9410	153,720,264
19.	ՀՀ Սյունիքի մարզի Կարճևանի համայնքի ներտնտեսա-յին ոռոգման ցանցի վերակառուցում	3364	77,700,883
20.	ՀՀ Սյունիքի մարզի Լեհվազի համայնքի ներտնտեսային ոռոգման ցանցի վերակառուցում	2722	93,265,396
21.	ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի համայնքի ներտնտեսային ոռոգման ցանցի վերակառուցում	3091	128,005,095
22.	ՀՀ Սյունիքի մարզի Շվանիձոր-Նոնաձորի համայնքի ներտնտեսային ոռոգման ցանցի վերակառուցում	18144	257,862,469
	Ընդամենը	46791	913,427,198
	ԸՆԴԱՄԵՆԸ	376644	7,993,324,084

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

572k.voroshum